

ՊԵՅՐՈՒԹԻ «ՄՀԵՐ ՄԿՐՏՉԵԱՆ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ

Posted on April 19, 2015 by Keghart



Category: [Opinions](#)



Համօ Մոսկոֆեան, Պեյրուֆ, 19 Ապրիլ 2015

Հայ եւ խորհրդային թատրոնի շարժապատկերի անմահ դերասան Միեր Մկրտչեանի անունը հպարտօրէն կրող, վաստակաւոր բեմադրիչ Յարութ Գնդունիի թատերախումբը վերջերս հիացուց Լիբանանի թատերասեր ընտրանին իր «Անկոչ Հիւրը» թատերախաղի բեմադրութեամբ, Բրիտանացի նշանաւոր վիպագիր Ակաթա Քրիսթիի հեղինակութեամբ: Պեյրուֆի Յակոբ Տեր Մելքոնեան թատերասրահին մէջ տեղի ունեցած իրարայաջորդ ելոյթներուն որպէս գնահատելի արձագանգ, կը հանդիպինք «Միեր Մկրտչեան» թատերախումբի անդամներուն հետ, ունենալով հետեւեալ հարցազրոյց-հարցախոյզը թատերախաղի աննախընթաց յաջողութեան եւ յետագայ ծրագիրներուն մասին:



Համօ Մոսկոֆեան, Պեյրուֆ, 19 Ապրիլ 2015

Հայ եւ խորհրդային թատրոնի շարժապատկերի անմահ դերասան Միեր Մկրտչեանի անունը հպարտօրէն կրող, վաստակաւոր բեմադրիչ Յարութ Գնդունիի թատերախումբը վերջերս հիացուց Լիբանանի թատերասեր ընտրանին իր «Անկոչ Հիւրը» թատերախաղի բեմադրութեամբ, Բրիտանացի նշանաւոր վիպագիր Ակաթա Քրիսթիի հեղինակութեամբ: Պեյրուֆի Յակոբ Տեր Մելքոնեան թատերասրահին մէջ տեղի ունեցած իրարայաջորդ ելոյթներուն որպէս գնահատելի արձագանգ, կը հանդիպինք «Միեր Մկրտչեան» թատերախումբի անդամներուն հետ, ունենալով հետեւեալ հարցազրոյց-հարցախոյզը թատերախաղի աննախընթաց յաջողութեան եւ յետագայ ծրագիրներուն մասին:



ՅԱՐՈՒԹ ԳՆԴՈՒՆԻ.

Թատերախումբի բեմադրիչ, դերասան, մարմնաւորած ու բեմադրած է 40է աւելի թատերախաղեր, հեղինակ է տասնեակ մը թատերախաղերու եւ 30է աւելի թարգմանութիւններու

Այս թատերախումբը երկու տարիէ ի վեր է որ կազմուած է: Միեր (Ֆրունզիկ) Մկրտչեանը իմ ընկերս էր, Հայաստանի ուսանողութեան օրերէն: Այս երկրորդ թատերախաղը նոր ուժերով եւ կազմով է որ բեմ բարձրացաւ եւ թատերասեր ընտրանին, մտաւորականութիւնը շատ գնահատեց: Կը յուսանք որ յաջորդ տարի աւելի հզօրանանք: Մեր թատերախումբը կուսակցական գաղափարաբանութենէ հեռու է, անդամները բոլոր “գոյնի” են եւ մեր գործը արուեստն է: Ծրագրին մէջ ունինք զանազան թատերախաղեր եւ զանոնք հերթականօրէն պիտի ներկայացնենք: Որպէս դերասան ու բեմադրիչ 40է աւելի թատերգութիւններու մասնակցած եմ, լուրջ հեղինակներու, ինչպէս Իպսըն, Շանթ, Փրիսլի եւ ուրիշներ, որպէս դասական ստեղծագործութիւններ:



Այս տարի, Ակաթա Քրիսթիի այս գործը ընտրեցինք՝ «Անկոչ Հիւրը» (Unexpected Guest) Բաւական դժուար էր, սակայն մեր հետ աշխատող արուեստագետ-արուեստագիտուհիները բաւական փորձառու էին եւ օգնեցին որ թատերախաղը յաջողութեամբ պսակուի: Մենք պիտի ձգտինք աւելի լաւը տալ:

ՅՈՎԱԿԻՄ ԲԵՇԻՇԵԱՆ.

Բազմավաստակ դերասան, վերցուցած է մահացած Ռիշարի դերը թատերախաղին մէջ

Ինձի համար առաջին անգամն է որ ելոյթ կ’ունենամ «Միեր Մկրտչեան» թատերախումբին հետ: Բոլոր դերասանները բարեկամներ են եւ այսպիսի սիրելի անձերու հետ բեմ բարձրանալը հաճոյք է: Կարելորդ բեմին հետ կապուած ըլլամ եւ շարունակեմ ծառայել հայ թատրոնին:

ԼԱՐԱ ԽԱՉԻԿԵԱՆ.

Բեմադրիչի օգնական, երաժշտութիւն, նկարչութիւն

Նկատի առնելով որ թատերախումբը կազմաւորման գործընթացի մէջ է, ապա եւ բեմադրիչի օգնականի, երաժշտութեան ընտրութեան, նկարչական ձեւաւորման աշխատանքները ինկաւ մեր ուսերուն եւ դերասաններէն ոմանց վրայ...: Կը սիրեմ թատրոնի աշխարհի եւ մանաւանդ այսպիսի թատերախումբի մը հետ, որ խմբային, բարձր մակարդակի, կատարելիութեան հասնելու ձգտումով յառաջ կ’երթայ:

ՄԻՄՈՆ ԵԱՓՈՒՃԵԱՆ.

Դերասան, մարմնաւորած է Միշելի եւ Մըքհրեկըրի կերպարը «Անկոչ Հիւրը» թատերախաղին մէջ

Նոյն անձի մը երկու դերերը ստանձնած էի, որ ծպտուած կը վերադառնայ վրեժ լուծելու որպէս Միշել, որպէսզի ոճիրը մէջտեղ չելլէ, ծածկելով զայն եւ ուրիշ անձին վրայ կը նետէ, բայց ի վերջոյ դիմակազերծ կ’ըլլայ...:

Բազմաթիւ թատերախումբերու մէջ դերեր վերցուցած եմ Համազգայինի, Հայկազեանի, Մուշեղ Մուղալեանի, արաբերով եւ անգլերէնով թատրոններ խաղալով: Մի քանի տարի ալ «Վահրամ Փափազեան» թատերախումբի հետ ելոյթներ ունենալէ ետք միացայ Յարուէ Գնդունիի բեմադրած «Միեր Մկրտչեան» թատերախումբին:



ՔՐԻՍԹԻՆ ՍՐԱՊՈՆԵԱՆ.


Դերասանուհի, հանդես կու գայ Սիմոնէ ոստիկանապետի դերով

Պէտք է խոստովանիմ որ ոստիկանի դերին մէջ դիւրութեամբ մտայ: Ոստիկանապետուհիի դերը փոխեցին որպէսզի յարմարի ինձի եւ ամէն ինչ յաջող ընթացք ստացաւ:

2004 թուականին, առաջին անգամ բեմ բարձրացայ Սուրիկ Խտըշեանին հետ, Գրիգոր Չօհրապի կնոջ դերով: 2 թատերախաղ ալ «Վահրամ Փափազեան»ի եւ վերջերս երկու անգամ ալ Յարուէ Գնդունիի բեմադրութեամբ, «Միեր Մկրտչեան» թատերախումբին հետ:

ՎԻԳԵՆ ԲԵՕՇԿԵՐԵԱՆ.

Դերասան

Մեր սիրելի բեմադրիչ Յարուժ Գևորգիին քաջալերանքով երկրորդ տարին է որ բեմ կ'ելլեմ "խենթ"ի դերով, որ շատ սիրեցի...: Անցեալ տարի ալ ոստիկանի դերով է որ հանդես եկայ: Բոլորին վարձքը  կատար, ապրի՛ «Միեր Մկրտչեան» թատերախումբը:

ՍԱՐԻՆ ԽԱՉԻԿԵԱՆ.

Դերասանուհի, Ռիշարի կին Լարայի դերը մարմնաւորած էր թատերախաղին մէջ

Առաջին անգամն է որ բեմ կը բարձրանամ «Միեր Մկրտչեան» թատերախումբին հետ, մինչ այդ՝ 1994Էն ի վեր Հայկազեան համալսարանի, ապա «Վահրամ Փափազեան» թատերախումբերէն դերեր վերցուցած եմ: 7 տարուան դադարէ մը ետք, թատերախումբին նեղ-կուսակցական հասկացողութիւններէ հեռու ըլլալը, համերաշխ եւ միասնական ջանքերով յաջողութեան հասնելու ջանքերը քաջալերեց զիս վերադառնալու թատրոն եւ նուիրուիլ այս դժուարին արուեստին:

ԱՅՏԱ ՍՐԱՊՈՆԵԱՆ.

Դերասանուհի, մարմնաւորած է մեծ մօր Մարկոյի դերը

Քիչ մը խիստ ու լուրջ մեծ մօր, Մարկոյի անձնաւորութիւնը, որ զուսպ է եւ զգացումները չարտայայտեր, խաղած եմ Վարուժան Խտըշեանի, 2-3 անգամ Չօհրապ Եագուպեանի, Սուրէն Խտըշեանի հետ: Վահրամ Փափազեանի (Երուանդ Ղազանճեան) քանի որ դուստրերս «Միեր Մըրտչեան»Էն ելոյթ ունեցան անցեալ տարի, ցանկութիւն առաջացաւ դեր ստանձնել «Անկոջ Հիւր» թատերախաղին մէջ: Յոյսով եմ որ հանդիսատեսները գոհ մնացին...:

Ակամայ բաժնուելով այս նուիրեալ արուեստագետ-արուեստագիտուհիներէն, կը խոստանանք միշտ ըլլալ իրենց հետ՝ հայ թատրոնի ծառայութեան դժուարին գործին մէջ:

